ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

(ԽՈՍՎԱԾ ՀԱՎԱՐՏ ԹԱՂՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ)

Սիրելի՛ հայ հավատացյալ ժողովուրդ ի Սիսյուռ աշխարհի.

Բազմահազար սգավորներու արտասվալից աչքերուն առջև, հավերժական Արարատի դիմաց, Ս. Էջմիածնի դարավոր կաթողիկեին հովանիին ներքև, Խրիմյան Հայրիկ և Ներսես Աշտարակեցի կաթողիկոսներու կողքին, Իր հավիտենական քնարանին մեջ կմտնե անա հանուր հայ ազգեն պաշտանքի արժանացած Սրբազնագույն Հայրապետը՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը:

Կանգնած Իր գերեզմանին առջև, մեր սրբազան հայրապետներու ոգեղեն ներկայության մեջ, այստեղ, ուր լուսեղեն կերպավորմամբ Աստվածորդին էր իջեր, ուխտելու ենք նվիրվիլ ու ծառայել մեր Մայրենի Ս. Եկեղեցիին, մեր Մայր Հայրենիքին և ժողովուրդին պայծառացման, անսասանության և հավերժացման, այնպես, ինչպես այնքան արժանի կերպով Իր անձը ի սպաս դրավ մեր օրերու մեծագործ հայրենասեր Հայրապետը՝ Գեորգ Զ.:

Այս նվիրական պահուն, մեր սրտագին աղոթքն է, որ Աստված միշտ հաստատ ու անսասան պահե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին իր լիությանը մեջ: Թո՛ղ Աստվածային Աջը միշտ հովանի ու պահապան լինի Մայր Հայրենիքին ու ժողովուրդին վրա:

Կյա՜նք հավիտենական և լո՜ւյս մշտնջենի Ամենայն Հայոց Սրբազնագույն Հայրապետին՝ Ն. Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Վեհափառ Կաթողիկոսին: Ամեն: